ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 03 >> սեպտեմբերի 2014թ. N 74

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի <<բ>> ենթակետով, 2014 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացվող հիմնանորոգման և կառուցման աշխատանքների ավարտի կապակցությամբ ընդունման-հանձման աշխատանքներն իրականացնելու նպատակով.

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Կ. Դանիելյան)՝ ընդունող հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել կապալառու կազմակերպությունների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Արմավիրի տարածքային բաժնի, Արմավիրի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության, ,,Գազպրոմ Արմենիա,, ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ-ի աշխատակիցներին (համաձայնությամբ):
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Մ.Քարտաշյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2014 թվականի սեպտեմբերի 3 -ի
N 74 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝
Կ.Դանիելյան

-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Անդամներ՝
Ռ.Երվանդյան

-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Ա.Թովմասյան

-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ